

COVID - 19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՄԱԿՅՎԱԾ ՄՈՏԵՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ Է, ՈՐՏԵՂ ՀԱՇՎԻ Ե ԱՌԵՎԵԼ ԱՄԵՆ ԻՆՉ, ԸՆԴՉՈՒՊ՝ ԲՈԼՈՐ ՌԻՍԿԵՐԸ

Հունիսի 9-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց միջգերատեսչական համակարգման խորհրդին առընթեր տնտեսական խմբի նիստը: Հանդիպմանն անցկացվեց Վրաստանի կառավարության հակաճգնաժամային բյուջեի շնորհանդեսը:



Ինչպես հայտարարեց Գիորգի Գախարիան, համավարակով պայմանավորված ճգնաժամի հաղթահարման համար պահանջվում է առկա ռեսուրսների առավել բարձր մակարդակի մոբիլիզացում:

- Մեր հավաքի նպատակն է քննարկել 2020 թվականի հակաճգնաժամային բյուջեն: Ակնհայտ

է, որ համավարակը հետընթաց գրանցեց երկրի էկոնոմիկայում: Այսօր մենք խորհրդարանում ենք (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵԼԻ

Ինչպես արդեն նշվեց, հունիսի 9-ին, Վրաստանի կառավարության վարչակազմում վարչապետ Գիորգի Գախարիայի գլխավորած տնտեսական խորհրդի նիստում, անցկացվեց 2020 թվականի բյուջեի փոփոխությունների նախագծի շնորհանդեսը:

Նախորդությունները, նշեց, որ 2020 թվականի բյուջեն ներառում է լրացուցիչ ռեսուրսներ (առանց հաշվի առնելու ակնկալվող եկամուտների 1,8 միլիարդ լարին)՝ 3,4 միլիարդ լարի գումարի չափով (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Նիստում Վրաստանի ֆինանսների փոխնախարար Գիորգի Կակաուրիձեն, մանրամասնելով հակաճգնաժամային բյուջեի առաջ-

ԿԻՐԱԿԱՆԱՑՎԵՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԵՎ ԲԱՐՁՐԱԼԵՌ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԾՐԱԳՐՎԱԾ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ

Հունիսի 11-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան կառավարության նիստում հայտարարեց, որ չնայած կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, կառավարությունը հակաճգնաժամային բյուջեում, իր խոստմանը հավատարիմ, նախատեսում է կենսաթոշակների և բարձրալեռ գոտու բնակիչներին հավելումների ավելացում:

Մասնավորապես, վարչապետի խոսքով, հուլիսի 1-ից 70 տարեկանից բարձր թոշակառուների կենսաթոշակը կավելանա 30 լարիով և կդառնա 250 լարի, իսկ բարձրալեռ շրջաններում բնակվողների կենսաթոշակը՝ 300 լարի:

Մասնավորապես, այնպես էլ՝ 70-ից բարձր կենսաթոշակառուների համար տնտեսական աճի 80 տոկոսանոց ցուցանիշից:

Բացի այդ, վարչապետը նշեց, որ այս տարի բարձրալեռ բնակավայրի կարգավիճակ է ստացել ևս 58 գյուղ:

Նրա խոսքով, աճը կապված կլինի ինչպես ար-

ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԼԸ

Վրաստանի կառավարությունը, նախօրոք մշակված ու հաստատված ծրագրի համաձայն, շարունակում է նոր կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով ներդրած տնտեսական և սոցիալական բնույթի սահմանափակումների փուլ առ փուլ վերացման գործընթացը:

Մասնավորապես, հունիսի 8-ից Վրաստանի ողջ տարածքում վերաբացվել են բոլոր տեսակի հոթելային նախարարության կողմից Վրաստանի ողջ տարածքում ռեստորաններն ու առողջապահության (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԻՍԻ 15-Ը ԴԻՄԱԿ ԿՐԵԼԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԼԻՆԻ

ԿԱՆՈՆԻ ԽԱՆՏԱՆ ԴԵՐՈՒՄ ՑԻՉԻԿԱԿԱՆ ԱՆՉԸ ԿՏՈՒՄ Ե՛ 20, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՉԸ՝ 500 ԼԱՐԻՎ, ԻՍԿ ԲԱՅԱՍԱՐԴ ՀԱՎԱԵՌՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑԻՉԻԿԱԿԱՆ ԱՆՉԸ ՏՈՒՎԱՆՎՈՒՄ Ե՛ 2000, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՉԸ՝ 10 ՀԱՅՍՐ ԼԱՐԻՎ

Հունիսի 12-ին Վրաստանի խորհրդարանը՝ 76 կողմ ձայնով, հաստատեց դիմակի պարտադիր կիրառման օրենսդրական փոփոխությունները:

Օրինագծով սահմանվեց, որ փակ հասարակական տարածքում դիմակ կրելու կա-

մունքները խախտելու համար ֆիզիկական անձը կտուգանվի 20, իսկ իրավաբանական անձը՝ 500 լարիով: Ըստ փոփոխություն-

ների, հասարակական տրանսպորտով, մետրոյով տեղաշարժվելիս դիմակ կրելու կարգը (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՈՐԳԻ ԳԱՒԱՐԻԱ. «ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՅՈՒՅԱԲԵՐԵՆՔ ՓՈԽԱՂԱՐՁ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ»

ՎՐԱՑ ԲԺՇԿՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԿԳՈՐԾՈՒՂՎԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Հունիսի 11-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, երկրի կառավարության հեղթակաճ նիստում հայտարարեց, որ առանձին վերցրած որևէ երկիր չի կարող միայնակ հաղթահարել կորոնավիրուսով պայմանավորված ճգնաժամը:

Նրա խոսքով, Վրաստանը քննարկում է հարեւան Հայաստանին օգնելու հարցը, եւ համապատասխան առաջադրանքը տրվել է առողջապահության նախարարությանը:

- Մենք պետք է ցուցաբերենք փոխադարձ աջակցություն: Ինչպես գիտեք, մեր հարեւան երկրներում վերջին ժամանակաշրջանում բավականին լարվել է իրավիճակը: Աճածնք են ամեն օր հաղորդակցվում են Հայաստանի վարչապետի հետ, ինչպես նաեւ առողջապահության եւ էկոնոմիկայի նախարարնե-

րը, բոլորը, արտաքին գործերի նախարարը եւ մենք արդեն մուկանակնացրել ենք, թե ինչ տիպի օգնություն է անհրաժեշտ մեր հարեւաններին: Այստեղ փոխադարձ աջակցությունն անչափ կարեւոր է: Առողջապահության նախարարությունն արդեն ստացել է առաջադրանք, պատրաստել այն օգնությունը, որը Վրաստանը կարող է ցուցաբերել հարեւան Հայաստանին: Ինչպես երեւում է, առաջին հերթին, դա կլինի բժշկական անձնակազմով օգնությունը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

ԵԿԱՏԵՐԻՆԵ ՏԻԿԱՐԱՉԵ. «ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՌԱՏԱՐԿԵՑԻՆՔ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՇՆՉԱՌՈՎԱՆ ՍԱՐՔԵՐՈՎ ԵՎ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՄՍԱԲ»

Հունիսի 11-ին Վրաստանի առողջապահության նախարար Եկատերինե ՏիկարաՉեն հեռախոսազրույց ունեցավ Հայաստանի առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի հետ:

Հայկական կողմի նախածեռնությամբ կայացած հեռախոսազրույցին, կողմերը քննարկեցին բուժական եւ հակահամավարակային միջոցառումներին առնչվող հարցեր:

Արսեն Թորոսյանը վրացական կողմին մանրամասն ներկայացրեց Հայաստանում իրավիճակը:

- Վիճակագրական տվյալներ ներկայացրեց, թե քանի մարդ է բուժվում տանը, քանիսն են անցնում ստացիոնար բուժում, տեղեկատվություն ծանր հիվանդների վերաբերյալ, նաեւ թե քանի հիվանդի է պահանջվում թթվածնով օգնություն: Նրանք էլ կորոնավիրուսն ընկալում են գլոբալ հիմնախնդիր, եւ, եմելով մեր աշ-



խարհագրական դիրքից, նշանակալի է, որպեսզի բոլոր այդ հիմնախնդիրների կարգավորումը իրականացվի համալիր, տարածաշրջանային կտրված- (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏՈՒՐԻԶՄ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Համավարակով պայմանավորված սահմանափակումների վերացմանը զուգընթաց, Վրաստանի կառավարությունն աշխատում է նոր կարգավորումների ուղղությամբ:

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան համապատասխան գերատեսչությունների հետ համդիպմանը քննարկեց այն կոնկրետ չափորոշիչները, որոնց բավարարումը միջազգային զբոսաշրջության բացման պարտադիր պայմանն է:


Չափորոշիչների մշակման գործընթացում Վրաստանի կա-

ռավարության գլխավոր առաջնահերթությունը կրկին մնում է երկրի քաղաքացիների առողջապահության հարցը, որպեսզի կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարում երկրի կողմից ձեռք բերած հաջողությանը սպառնալիք չծագի: Միաժամանակ, ակտիվորեն շարունակում են բա- (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

COVID - 19

ԱՇԽԱՐՀՈՒՄ՝ 7 ՄԻԼԻՈՆ 635 ՀԱԶԱՐԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ, 3 ՄԻԼԻՈՆ 865 ՀԱԶԱՐԻՑ ԱՎԵԼԻ ԱՊԱՔԻՆՎԱԾ

Աշխարհում նոր տիպի կորոնավիրուսային վարակի COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 7 միլիոն 635 հազարը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 424 հազարը: Ապաքինվել է ավելի քան 3 միլիոն 865 հազարից ավելի մարդ:



G20

ԱՎԵԼԻ ՔԱՆ 21 ՄԻԼԻԱՐԴ ԴՈՒՍՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՂԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ քսանյակի երկրները խոստացել են աջակցել կորոնավիրուսի դեմ պայքարում հատկացնել 21 միլիարդ դոլար համաշխարհային առողջապահությանն աջակցելու համար: Այդ միջոցները կուղղորդվեն կորոնավիրուսի այտուցները, պատվաստանյութի ստեղծմանը, ինչպես նաև հետազոտություններին: Սաուդյան Արաբիան, որը ներկայումս նախագահում է G20-ը, կհատկացնի 500 մլն դոլար կորոնավիրուսի դեմ պայքարի համար:

ԱՄՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՀԱԿԱՈՍԱՍԱՅԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐԸ

ԱՄՆ խոշոր քաղաքներում շարունակվում են ոստիկանների կողմից անմարդկային վերաբերմունքի արդյունքում աֆրոամերիկացի ճորջ Ֆլոյդի մահվան զանգվածային բողոքի ցույցերը: Ֆլոյդը մահացել էր, քանի որ ոստիկանն ավելի քան 8 րոպե ծնկով սեղմած պահել էր նրա պարանոցը: ԱՄՆ նախկին նախագահներ Զիմի Քարթերը, Ջորջ Ֆորադ Լյուսերը, Բիլ Էլլինթոնը եւ Բարաք Օբաման դատապարտել են տեղի ունեցածը: Մինեսոտայի ոստիկանության սպա Դեյրել Շովինին սպառնում է մինչև 40 տարվա ազատազրկում: Դեպքի վայրում գտնվող ոստիկանության արդեն նախկին երեք սպաներին եւս մեղադրանք է առաջարկվել սպանությանը ժամանակելու եւ դրան նպաստելու համար: Այդ երկրի պաշտպանության նախարարը հայտարարել է, որ չի աջակցում բանակի միջոցով հուզումները ճնշելու նախագահի հայտարարությանը:

COVID - 19

ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՐԹԱՎԱՆ ՓՈՒԼԸ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Մինչ ստուգում անցած ու հատուկ թույլտվություն ունեցող հյուրանոցները: Ռեստորանները կաշխատեն համապատասխան հանձնարարականներով. օրինակ՝ առավելությունը կտրվի սեղանի նախապես ամրագրմանն ու քարտով վճարմանը: Բացի այդ, երկու ժամը մեկ կախտահանվեն ընդհանուր օգտագործման վայրերը (գուգարաններ, վերելակներ), ինչպես նաև կկիրառվեն միանգամյա օգտագործման սեղանի սփռոցներ:

Փակ տարածքներում, սենյակի օբյեկտներում սեղանները պետք է նվազագույնը 2 մետր հեռավորությամբ լինեն դասավորված, մեկ սեղանի շուրջ կարող է նստել առավելագույնը 6 մարդ, բացառություն կարող են կազմել ընտանիքի անդամները եւ մինչև 12 տարեկան դեռահասները: Ռեստորաններին խորհուրդ է տրվում օգտագործել մեկանգամյա կիրանման ճաշացուցակ կամ փոխարինել այն էլեկտրոնայինով: Այս դեպքում, պետք է ապահովվի ձեռքերի ախտահանիչ միջոցի առկայությունը:

Յուրեղանի 8-ից վերացվեց նաև միջբաղնարային տրամադրությունները: Նշենք, որ հունիսի 15-ից կսկսվեն գործել նաև Վարձիայի ու Ուլիսիցիխի քարանձավային համալիրները: Առաջիկա երեք ամիսների համար արգելափակումներ կարգապահվեն համար կգործեն արտոնյալ սակագներ, այսինքն՝ քաղաքացիները կօգտվեն 50 տոկոս զեղչով՝ 15-ի դիմաց վճարելով 7 լարի:

ՎԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԵԿԱՏԵՐԻՆԵ ՏԻՎԱՐԱԶԵ. «ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՈՒՑԱՐԿԵՅԻՆՔ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՇՆՉԱՌԱՎԱՆ ՍԱՐՔԵՐՈՎ ԵՎ ԲՈՒԺՆՆՆԱԿԱԿԱՏՎՈՒՄ ԳՈՐԾՈՒՄԱՄԲ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

քով, քանի որ այն միայն մի երկրին ուղղված մարտահրավեր չէ, - «Ինտերպրեսնյուսին» տված հարցազրույցում հայտարարեց Եկատերինե Տիկարաձեն: Նրա խոսքով, նշանակալի է երկրների միջև փորձի փոխանակումը: - Հայաստանի առողջապահության նախարարը հետաքրքրվեց, թե ինչպիսին է աշխարհում օգտագործվող մեդիկամենտների վերաբերյալ, ինչ միջոցառումներ ենք իրականացրել, ինչպես ենք նախապատրաստվում: Հետաքրքրվեց, թե մեր մասնագետները ինչպես են բացահայտում վարակման շղթան: Գլխավորապես հետաքրքրվեց, թե կլինիկական ինչ մոնիթորինգներ ունենք: Որոշեցինք անցկացնել առցանց խորհրդատվություն, որը կստանա պարբերական բնույթ: Խորհրդակցությունից հետո, մանրամասն կարգվեն պահանջներն ու կօրագրենք կոնկրետ անելիքները: Մենք հայկական կողմից առաջարկել ենք օգնել շնչառական սարքերով, ինչպես նաև բուժամբաստաններում գործող մանր: Կմեկնեն նրանք, ովքեր ցանկություն կհայտնեն: Ելնելով մեր թեստերի ծավալներից՝ առաջարկեցինք սահմանել իրականացնել թեստավորում: Լաբորատորիաների հզորության անբավարարության դեպքում, ապահովվել նմուշներն ստուգելու հնարավորությունով: Նախարարը դրական գնահատեց այս գաղափարը եւս: Պայմանավորվեցինք, որ կկայանա երկու երկրների մասնագետների հաղորդակցություն, եւ դրանից հետո կհաստատվեն օգնության մարտամասերը, - նշեց Եկատերինե Տիկարաձեն:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂԵԼԻՉԵ. «ՎԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱԿՏԻՎԱՅԻՆ ԱՄԵՆ ՕՐ 500-ԻՅ 1000 «PCR» ԹԵՏԱՎՈՐՈՒՄՈՎ ԿԱՍ ՆՎԻՐԵԼ 10 ՀԱԶԱՐ «PCR» ԹԵՏՍ

- Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը Հայաստանի նախարարվել է երկրի համապատասխան քաղաքացիների ստուգումն անցկացնելու: Նաև Հայաստանի նվիրել 10 հազար «PCR» թեստ, - այդ մասին հայտարարել է Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամդերիձեն եւ հավելել, որ ամեն օր կարող են անել Հայաստանի քաղաքացիների 500-1000 «PCR» թեստավորում: - Ընդամենը 4 ժամվա ճանապարհ է, եւ, եթե ունենանք նմուշներ, ապա 24 ժամում կարող ենք նրանց ուղարկել պատասխանները կամ եւս մեկ տարբերակ. կարող ենք Հայաստանին նվիրել 10 հազար «PCR» թեստ, - հայտարարել է Ամիրան Գամդերիձեն:



«ՄԵԿ ԴԻՄԱԿ՝ ՄԵԿ ԿՅԱՆՔ». ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՀԱՎԱՔ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 7-ից Վրաստանում մեկնարկվել են բարեգործական նախաձեռնություններ՝ ուղղված կորոնավիրուսով պայմանավորված ծանր իրավիճակում հայտնված Հայաստանին աջակցելու: Հունիսի 12-ի դրությամբ, «Հայաստանի ընկերներ-Վրաստան» նախաձեռնության շրջանակներում, Վրաստանում գնվել եւ Հայաստան է ուղարկվել արհեստական շնչառության 50 սարք:

յան գրասենյակի, Բելգիայի մի քանի հայերի, Ախալքալաքի գործող «News» լրատվական գործակալության, «Vlad» խանութի ֆինանսական աջակցությամբ: Սարքերի հետ միասին, Հայաստան է ուղարկվել 3000 դիմակ գործարար Վարդան Մամուչարյանի կողմից: Ավելացնենք, որ նախաձեռնության աջակիցների թիվը օրեցօր ավելանում է: Նշենք նաև, որ փոխադրումներն իրականացվում են Վրաստանում Հայաստանի դեսպանության շարունակական աջակցությամբ: Աջակցությունը շարունակվում է...

Ջուզահեռ, թբիլիսիում սկսվել է «Մեկ դիմակ» մեկ կյանք» կարգախոսով դրամահավաք, որը շարունակվելու է հունիսի 15-ը ներառյալ: Առ այս պահը Վրաստանի «Սաքարբելըուրանկուր» բացված հետեյալ հաշվեհամարին GE03BG000000345892183 հաշվեհամարին փոխանցվել է 2 237 լարի եւ 55 թեթրի: Հավաքված գումարը ծառայելու է կորոնավիրուսի պայքարում Հայաստանին աջակցությանը: Նախաձեռնության հեղինակները կոչ են անում հնարավորության սահմաններում գումար փոխանցել՝ թեկուզ մեկ դիմակի արժեքով: Ինչ վերաբերում է վերոնշյալ 50 սարքավորումներին, ապա դրանք ձեռքբերումը հնարավոր է դարձել թբիլիսիցի գործարարների, Լյուքսեմբուրգի հայ համայնքի մի խումբ ներկայացուցիչների, «Caritas Georgia»-ի թբիլիսի

Շարքից շարք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

COVID - 19.

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՂԱՐԿՎԵՑ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ, ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ԻՐԱՎԱԽԱՆՏՄԱՆ 8737 ՓԱՍՏ

Ինչպես արդեն հաղորդել ենք, մայիսի 23-ից Վրաստանում արտակարգ դրությունը վերացվեց: Գրեթե երկամսյա ժամանակահատվածում արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումների խախտման համար իրավապահների կողմից վավերացվել է 8737 փաստ, որի արդյունքում տուգանվել են 8716 ֆիզիկական եւ 21 իրավաբանական անձինք: Ընդհանուր առմամբ, ֆիզիկական անձանց որպես տուգանք դուրս է գրվել 26 148 000 լարի, իսկ իրավաբանական անձանց՝ 315 հազար լարի (ընդամենը՝ 26 463 000 լարի):

գործերի նախարարության շուրջ 10 հազար աշխատակից:

Ավելացնենք, որ Վրաստանում արտակարգ դրության ռեժիմի ժամանակահատվածում մարտի 21-ից մայիսի 22-ը ռեժիմը խախտողների վիճակագրության մեջ երկրի տարածաշրջանների թվում Սամցխե-Ջավախեթին «օրինակապես» լինելու առումով երկրորդն է, այստեղ արձանագրվել է ընդամենը 230 վարչական իրավախախտում:

Ըստ Վրաստանի ԵԳ նախարարության տվյալների, տուգանքների ամենափոքր թիվը գրանցվել է Գուրիայի տարածաշրջանում խախտման 162 դեպք, ընդ որում՝ տուգանքներ են արձանագրվել 161 ֆիզիկական եւ 1 իրավաբանական անձի նկատմամբ: Գուրիային հաջորդում է Սամցխե-Ջավախեթին՝ 230 խախտման դեպք, որից 228-ը ֆիզիկական, իսկ 2-ը՝ իրավաբանական անձինք են: Թբիլիսիում արձանագրված տուգանքների ամենամեծ թիվը 2513 է, հաջորդը Քվեմո-Քարթլին է՝ 1972 տուգանք:



ՏԱՐԵԿԱՆ ԳՆԱԾՆ ԱՎԵԼԱՅԵԼ Է...

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի վիճակագրության պետական ծառայությունը, մայիսի տվյալների համաձայն, Վրաստանում մեկ ամսվա տարբերությամբ 0,2 տոկոս գնաճ է գրանցվել, իսկ տարեկան գնաճը կազմել է 6,5 տոկոս: Ընդ որում, հյուրանոցների, սրճարանների եւ ռեստորանների գներն աճել են 4,3 տոկոսով: Առողջապահության արժեքը նույնպես աճել է 1,3 տոկոսով:

Տրանսպորտային ծառայությունների գները նվազել են 2,4 տոկոսով: 4,4 տոկոսով նվազել է նաեւ տրանսպորտի շահագործման արժեքը:

Պարենային եւ ոչ ալկոհոլային խմիչքների գինը, նախորդ ամսվա համեմատ, մնում է անփոփոխ, իսկ ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի գինը աճել է 1,1 տոկոսով:

...ԵՎԱԶԵԼ՝

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԿԸ

Վրաստանի կառավարության փոխանցմամբ, նախորդ տարվա համեմատ, ընթացիկ տարվա առաջին 4 ամիսների ընթացքում հանցանքները զգալի նվազել են (-16,3 տոկոս):

Գործադիր իշխանությունը խորհրդարանին ներկայացված փաստաթղթում նշում է, որ նվազել են այնպիսի հանցանքները, ինչպիսիք են կողոպուտը (-53,4 տոկոս), թալանը (-23,9 տոկոս), գողությունը (-19 տոկոս) եւ սեփականության դեմ ուղղված այլ հանցանքներ:

«Պակասել են նաեւ խուլիգանության (-19 տոկոս), հրագետի (-28,4 տոկոս) եւ սանդղեղ կրելու (-51,8 տոկոս) դեպքերը, զգալի նվազում է դիտվում բմրանյութային (-36,6 տոկոս) եւ տրանսպորտային (-15,2 տոկոս) հանցանքներում,- ասված է կառավարության հաղորդագրության մեջ:



ՍԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ

ՄԻՆՉԵՎ ՅՈՒԼԻՍԻ 15-Ը ԴԻՄԱԿ ԿՐԵԼԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԼԻՆԻ

ԿԱՆՈՒՆԻ ԽՄԽՏՄԱՆ ԳԵՊԸՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԸ ԿՏՈՒՔԱՆՎԻ 20, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԸ՝ 500 ԼԱՐԻՈՎ, ԻՍԿ ԲԱՅԱՍԱՍՏՐԳ ՆԱԿԱԲՈՒՅԹՆԵՐԻ ՆԱՍՏՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԸ ՏՈՒՔԱՆՎՈՒՄ Է 2000, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԸ՝ 10 ՆԱՍՏՐ ԼԱՐԻՈՎ

(Սկզբը՝ 1-ին էջում)

խախտելու համար ուղեւորի կամ վարորդի համար սահմանվում է 20 լարիանոց տուգանք: Միաժամանակ, ըստ նախաձեռնության, տաքսիով տեղաշարժվելիս դիմակ կրելու կարգը խախտելու համար ուղեւորը կամ վարորդը տուգանվում են 20-ական լարիով:

Բացի վերոնշյալից, նախագիծը հստակեցնում է ուժի մեջ է թողնում այն կանոնակարգը, ըստ որի մեկուսացման եւ կարանտինային կանոնների խախտման համար ֆիզիկական անձը տուգանվում է 2000, իսկ իրավաբանական անձը՝ 10 000 լարիով:

Երկրում պահպանվում է նաեւ հանրային վայրերում մարդաշատ հավաքների հարցում ներդրված սահմանափակումը: Մասնավորապես, հանրային վայրերում 10 հոգուց ավելի մարդկանց հավաքն արգելված է: Ըստ կառավարության նոր կար-

գավորումների, արգելվում են զանգվածային հավաքները, օրինակ՝ հարսանիքները, ծննդյան արարողությունները, հոգեհացի արարողությունները եւ այլն: Բազմամարդ հավաքությունների համար ֆիզիկական անձը տուգանվում է 2000, իսկ իրավաբանականը՝ 10 հազար լարիով:

Կրկնվելու դեպքում քրեական պատասխանատվություն է նախատեսված:

ՈԼՈՐՏ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՍԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՈՐԵՎԷ ԴԵՊԵ ՉԱՐՁԱՆԱԳՐՎԵՅ՛»



- Երբ այսօր տեսնում ենք, որ բացահայտվում են վարակման առանձին դեպքեր, եւ վարակման աղբյուրը չի հաստատվում, մեր պարտքն է ահազանգել եւ հանրությանը կոչ անել ցուցաբերել զգուշություն: Պետք չէ իրավիճակը սրել այնպես, որ վարակվածների թիվը ավելանա, երբ չենք կարողանա պարզել վարակման աղբյուրը,- միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստի ավարտից հետո հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

Նա խոսեց արդարադատության նախարարության իրականացրած կանխարգելիչ միջոցառումների մասին, որոնք գործում են զերատեսչության ենթակայության ներքո գտնվող բոլոր հաստատություններում, այդ թվում քրեակատարողական հիմնարկներում:

- Բնականաբար, կշարունակենք հոգալ, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում կանխվի վիրուսի ներթափանցումը: Կարճաժամկետ ժամադրությունները, ծանրոցների եւ մյուս իրերի ընդունումը կշարունակվի: Թեպետ հարկ է գիտակցաբար մոտենալ այդ հարցին, քանի որ քրեակատարողական համակարգում կշարունակվի համապատասխան խստու-

թյան պահպանումը, որպեսզի հիմնարկները գերծ մնան վիրուսից:

Գերատեսչության համակարգի մյուս հաստատություններում, ինչպես արդեն հայտարարվել է, հավանաբար, միջեւ սեպտեմբեր աշխատակիցները կշարունակեն գործել տանը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատավայրում նրանց ներկայությունը անհրաժեշտություն է: Դրանով ցանկանում ենք մասնավոր հատվածին օրինակ ծառայել, որպեսզի մյուս աշխատակիցներին չպարտադրեն աշխատավայր գալ, եթե դրա անհրաժեշտությունը գործավարությունը չի պահանջում,- նշեց Թեա Ծուլուկիանին:

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

TBC ԲԱՆԿԸ ԻՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԱՌԱՋԱՐԿԵՑ ՍՏԱՐՏԱԾ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ

TBC բանկն իր աշխատակիցներին երկրորդ անգամ ընձեռեց ան-նախադեպ հնարավորություն՝ օգտվել ստարտափ ֆիզիոլոգիական արձակուրդից: Նորամուծությունից օգտվել ցանկացողների գրանցումն արդեն սկսվել է:



Ստարտափ ֆիզիոլոգիական արձակուրդի շրջանակներում, TBC-ի աշխատակիցները կարող են վեց ամսվա ընթացքում օգտվել լրիվ վարձատրվող ֆիզիոլոգիական արձակուրդից եւ սեփական գործարարությունը դարձնել իրականություն: Բացի այդ, TBC-ի աշխատակիցներն ավտոմատ կերպով կներգրավվեն «Ստարտափ» ծրագրում եւ կկարողանան օգտվել վճարովի եւ չվճարվող սպասարկումներից, բացառիկ պայմաններով ու արտոնություններով:

Նախաձեռնված ծրագրի շրջանակներում, TBC-ի աշխատակիցներն իրենց բիզնես առաջարկները կկարողանան ներկայացնել այդ ծրագրում հատուկ ընտրված ժյուրիի անդամներին, որից հետո ժյուրին կբացահայտի լավագույն գաղափարների հեղինակներին: Ծրագրին մասնակցելու համար ներկայացված բիզնես գաղափարը պետք է լինի տեխնոլոգիական եւ նորարարական:

Ստարտափ ֆիզիոլոգիական արձակուրդը TBC-ի նախաձեռնությամբ, ձեւավորվել է 2019 թվականին, որի օրինակը երկրում առկա չէ: Նախագիծը բացառիկ է եւ ոչ ստանդարտ, ինչպես աշխատակիցների, այնպես էլ՝ ստարտափի աջակցության տեսանկյունից: Ստարտափ ֆիզիոլոգիական արձակուրդի առաջին երեք հաղորդներն արդեն հայտնի են: Նրանցից մեկն արդեն իրեն վերապահված ֆիզիոլոգիական արձակուրդից օգտվել է եւ ներկայումս ակտիվորեն աշխատում է սեփական բիզնեսի զարգացման ուղղությամբ:

Ստարտափ ֆիզիոլոգիական արձակուրդի հաջորդ հաղորդներին TBC-ին կհայտարարի ընթացիկ տարվա սեպտեմբերին:

COVID - 19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՄԱԿՅՎԱԾ ՄՈՏԵՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ Է, ՈՐՏԵՂ ՀԱՇՎԻ Է ԱՌԵՎԵԼ ԱՄԵՆ ԻՆՉ, ԸՆԴՂՈՒՊ` ԲՈՒՐ ՌԻՍԿԵՐԸ

(Սկիզբը` 1-ին էջում)

Երկրայացնելու հակաճգնաժամային բյուջեն, եւ մինչեւ ներկայացնելն այն անհրաժեշտ է քննարկել... հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ էկոնոմիկայի տեսանկյունից, ներկայիս ճգնաժամի ամենամեծ հիմնախնդիրը դրա անկանխատեսելիությունն է:

Դա մեծ մարտահրավեր է գլոբալ էկոնոմիկայի համար եւ, բնականաբար, Վրաստանի փոքր, ծայրաստիճան բաց էկոնոմիկայի համար մարտահրավերը կլինի շատ ավելի ծանր ու սուր մարտահրավեր... Երկրայացնել ենք հակաճգնաժամային ծրագիրը, որը նախ առնչվում էր զբոսաշրջության ոլորտին, ապա գյուղատնտեսությանը, դեւելոպմենտին, կրթությանը: Այսօր քննարկվելիք հակաճգնաժամային բյուջեն ոչ մի կապ չունի հետճգնաժամային տնտեսական վերականգնման հետ: Դա առանձին հարց է, որի շուրջ մենք արդեն աշխատում ենք, խորհրդատվություններ անցկացնում մեր գործընկեր երկրների, գիտական շրջանակների ներկայացուցիչների հետ: Կոշակվի ծրագիր, որը ուղղված կլինի 2021-2023 թվականների տնտեսական առաջընթացին... հայտարարեց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ Վրաստանն առաջին

երկիրն էր, որ սկսեց եւ հաջողությամբ ավարտեց Արժույթի միջազգային հիմնադրամի հետ բանակցությունները եւ նրա հետ համաձայնեցրեց գործողության ծրագիրը: Նրա խոսքով, հիմնադրամի հետ համաձայնեցվել են նաեւ հակաճգնաժամային բյուջեի չափանիշները:

- Այդ չափանիշներով մենք ծրագրում ենք տնտեսության անկումը 4 տոկոսով: Եկամուտների բաժնուն կունենանք 1,8 միլիարդ լարիի բյուջետային պակասորդ: Բոլոր ընթացիկ եւ կապիտալ ծախսերի տեսանկյունից, բյուջեի ծախսերը կնվազեցվեն 600 միլիոնով, եւ բյուջետային պակասորդը, վերոնշյալ չափանիշներից ելնելով, ենթադրաբար կկազմի 8,5 տոկոս... Երկրայացնել ենք հակաճգնաժամային արագ վերականգնում:

Վարչապետի հավաստմամբ, ընթացիկ տարվա 4 տոկոսի տնտեսական անկմանը, 2022 թվականին կհաջորդի շուրջ 6 տոկոսի տնտեսական աճ:

- Սակայն հարկ է հիշել, որ այս ամենը կանխատեսված արդյունք է, եւ այսօր ամենամեծ մարտահրավերը գլոբալ ճգնաժամն է, որը անկանխատեսելի է: Ուստի, մենք բոլորս պետք է պատրաստ լինենք բոլոր մարտահրավերներին ինչպես համաճարակային, այնպես էլ տնտեսական տեսանկյունից: Հենց դրանով է պայմանավորված այն, որ երկրում առկա սուղ ռեսուրսները օգտագործվեն զգուշ

ությամբ, առավելագույնս հիմնավորված եւ արդարացի: Հենց դրանով էր պայմանավորված, օրինակ, որ քաղաքացիներին տրված նպատակային սոցիալական օգնությունը ծրագրվեց վեց ամսով եւ այն չտրվեց միամղաբանից... հայտարարեց վարչապետը:

Կառավարության ղեկավարի գնահատմամբ, գլխավոր խնդիրը հանդիսանում է այն, որ սովորեցնեք արագ հայտնաբերել վիրուսակիրներին, արագ բուժել եւ ապահովել մարդկանց տնտեսական զբաղվածությունը: Հենց դրան է ուղղված հակաճգնաժամային բյուջեն:

Կառավարության ղեկավարը շնորհակալություն հայտնեց ֆինանսների նախարարությանը, ազգային բանկին, կառավարության վարչակազմին, տնտեսական խմբին համատեղ աշխատանքի, երկրի մակրոտնտեսական կայունության պահպանման համար: Ամփոփելով խոսքը` վարչապետը կրկին խոսեց երկրում ստեղծված համաճարակային իրավիճակի մասին եւ քաղաքացիներին զգուշության կոչ արեց:

- Այսօր ակնհայտ է, որ ապահովագրված չենք ոչ մի բանից: Մեր գերագույն խնդիրն է պահպանել առավել զգուշություն, զգուշանալ միմյանցից եւ, բնականաբար, բոլորս միասին խրախուսենք մեր զբոսաշրջությունը: Բոլորին կոչ ենք անում ուղեւորություններ կատարել եւ հանգստանալ Վրաստանում: Դա կլինի ամենամեծ աջակցությունը երկրի էկոնոմիկայի եւ զբոսաշրջության ոլորտներին... հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան:


ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ` ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵԼԻ

(Սկիզբը` 1-ին էջում)

փով եւ ներառում է ներկայումս կառավարության հակաճգնաժամային ծրագ

հիմնադրամի հաշվին` 133,5 միլիոն լարի,

* կարանտինային տարածքներում եւ չվերթերի ծառայությունների սուր-



րի համար նախատեսված բոլոր անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները ընթացիկ ֆինանսական տարում, այդ թվում.

սիդավորման համար` 45,0 միլիոն լարի,

* վիրուսի կանխարգելման եւ տարածման ու առողջության պահպանման ծախսերի համար` 285 միլիոն լարի,

* առողջապահական համակարգի ենթակառուցվածքների պատրաստվածությունը բարելավելու համար` 60 միլիոն լարի,

* վարկային երաշխավորման սխեմայի ֆինանսավորման համար` 330 միլիոն լարի,

* աշխատավարձը կորցրած վարձու աշխատողների համար վեց ամսվա կտրվածքով 200 լարի օգնության տրամադրում` 450 միլիոն լարի,

* վարկային երաշխավորման սխեմայի ֆինանսավորման համար` 330 միլիոն լարի,

* եկամտահարկի իջեցում աշխատատեղերը պահպանելու նպատակով` 250,0 միլիոն լարի,

* իյուրանոցային տոկոսների վճարման սուբսիդավորման համար` 70,0 միլիոն լարի,

* միանվագ օգնություն ինքնազբաղ անձանց` 300 լարիի չափով` 75 միլիոն լարի,

* զբոսաշրջային օբյեկտների համար գույքահարկից ազատում` 45,0 միլիոն լարի,

* ընտանեկան կոմունալ ծախսերի սուբսիդավորում` 170 միլիոն լարի,

* փոքր դրամաշնորհների տրամադրման համար` 20,0 միլիոն լարի,

* 65-100 հազար սոցիալական վարկանիշային միավոր ունեցող ընտանիքների (ըստ ընտանիքի անդամների թվի) 6 ամսվա համար` 48,0 միլիոն լարի,

* շինարարության ոլորտի աջակցություն (Ներառյալ` հարկադրաբար տեղահանվածների համար տները ձեռքբերման աճ) 40,0 միլիոն լարի,

* օգնություն` 100 լարիի չափով, 6 ամսվա կտրվածքով, մինչեւ 100 հազար միավոր սոցիալական վարկանիշ ունեցող բազմազավակ ընտանիքներին` մինչեւ 13,0 միլիոն լարի,

* գյուղատնտեսության ոլորտի խթանում` 139,0 մլն լարի,

* սահմանափակ կարողություն ունեցող անձանց եւ երեխաների համար 6 ամսվա ընթացքում` 100 լարիի չափով օգնություն` 24,0 միլիոն լարի,

* ԱԱՀ լրացուցիչ փոխհատուցում` 600 միլիոն լարի,

* մոբիլիզացված գումար StopCoV

ՏՈՒՐԻՉԸ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲԱՅՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՐԳՎՎՈՐՈՒՄՆԵՐԸ

(Սկիզբը` 1-ին էջում)

նակցությունները միջազգային մակարդակով, այսպես կոչված, անվտանգ ուղղությունների նույնականացման տեսանկյունից:



Վրաստանի վարչապետի հանձնարարության համապատասխան, Վրաստանի արտաքին գործերի եւ էկոնոմիկայի նախարարությունները, դիվանագիտական ներկայացուցիչություններն ինտենսիվ կապ են պահպանում Եվրամիության երկրների հետ զբոսաշրջության բացման հարցով: Հատկանշական է, որ Եվրամիության ներսում դեռեւս չարունակվում է քննարկումը, այդ թվում` երրորդ երկրների հետ զբոսաշրջության բացման հետ կապված:

Հանդիպմանը նշվեց, որ չնայած առաջնահերթային համարվող երկրներից պայմանավորվածություն է ձեռք բերվել Իսրայելի հետ` ելնելով այնտեղ համավարակային իրավիճակի բարդացումից, զբոսաշրջիկների համար ճանապարհի բացումը ներկա փուլում հետաձգվել է: Հետեւաբար, Վրաստանի կառավարությունը հետեւում է իրադարձությունների զարգացմանը եւ որոշումը կընդունի` ելնելով համավարակային իրավիճակից եւ

տեղի ունեցող փոփոխություններից: Այդ ուղղությամբ, յուրաքանչյուր քայլի կատարման առաջնահերթային հարցը կրկին մնում է Վրաստանի քաղաքացիների առողջապահությունն ու անվտանգության պահպանումը:

Կառավարության անդամների հայտարարությամբ, առկա գլոբալ համավարակի ֆոնի վրա առանձնակի նշանակություն է տրվում ներքին զբոսաշրջությանը, որը բացվում է հունիսի 15-ից եւ յուրաքանչյուր քաղաքացու կողմից ներքին զբոսաշրջության խրախուսումը մեծ ներդրում է երկրի էկոնոմիկայի ոլորտում:

ԵՐԿԻՐ ԺԱՄԱՆՈՂՆԵՐԸ ԿԱՆՅՆԵՆ ՄԻ ՇԱՐՔ ՖԻԼՏՐԱՅՈՒՄՆԵՐ

Հունիսի 15-ից Վրաստանում բացվում է ներքին զբոսաշրջությունը, որից հետո հուլիսին երկիրը կսկսի պատրաստվել միջազգային զբոսաշրջության բացմանը:



Ինչպես «Վրաստանի» հետ հարցազրույցում նշեց զբոսաշրջության ազգային վարչակազմի ղեկավար Մարիամ Քվիվիշվիլին, զբոսաշրջության բացման գլխավոր չափորոշիչը անվտանգությունն է եւ երկրի մրցունակության պահպանումը:

Զբոսաշրջության բացումը կիրականացվի աստիճանաբար: Երկիրը պետք է լինի անվտանգ ինչպես երկրի քաղաքացիների ներքին տեղաշարժի, այնպես էլ միջազգային զբոսաշրջիկների ընդունման համար: Վրաստանում մշակվել են հանձնարարականներ, որոնք վերաբերում են սննդի օբյեկտներին, զբոսաշրջության տրանսպորտին, ուղեկցորդներին, հյուրանոցներին, որոնք կարող են օգտագործվել միջազգային զբոսաշրջիկների կողմից: Վրաստանում գործող բոլոր երեք միջազգային օդանավակայանները լրիվությամբ հարմարեցված են ներկայիս պահանջներին:

Զբոսաշրջիկների համար բացվող երկրների ցանկն անընդմեջ կվերանայվի: Գլխավոր չափորոշիչը այդ երկրներում առկա համաճարակային իրավիճակն է: Անընդմեջ պայմանակարգով քննարկվում է, այսպես կոչված, կամաչ գոտու երկրների ցանկը: Ակտիվ բանակցություններ ենք տարվում Իսրայելի հետ: Բանակցում ենք նաեւ Եվրամիության երկրների հետ, թեւ ինչպես հայտնի է, սկզբնական փուլում Եվրամիությունը բացելու է միայն իր անդամ երկրների հետ ելքունուտքը: Ամենայն հավանականությամբ, հուլիսին Եվրամիությունը կներկայացնի այն պայմանները, որոնք կառնչվեն երրորդ երկրների հետ զբոսաշրջության բացմանը... Երբ Մարիամ Քվիվիշվիլին:

Խորագրի նյութերը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ